



Սիրելի հայրենակիցներ,

«Լրատու»ի այս թիւին հրատարակութիւնը կը զուգահիշի Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակի Կիպրոսի Ոգեկոչման Յանձնախումբի ծրագրած ձեռնարկներու գործադրութեան: Հետեւաբար, մեր կարելիութեան սահմաններէն ներս, փորձեցինք պահել անոր տեղեկատուական բնոյթը, որուն մէջ հակիրճ ձեւով տեղ գտան Կիպրոսէն ներս ու Հայաստանի մէջ արձանագրուած պատմական եղելութիւնները:

Ինը տարիներու կանոնաւոր հրատարակութենէ ետք, առաջին անգամ ըլլալով, «Լրատու»ն բացառաբար կը հրատարակուի 28 էջերէ բաղկացած, ուստի ձեր հասկացողութիւնը կը խնդրենք այս ծանր, սակայն բովանդակալից պարունակութեան համար:

Կիպրոս–Հայաստան միացեալ դրոշմաթուղթի հրապարակումը, Կիպրոսի Խորհրդարանին կողմէ Հայկական Ցեղասպանութեան Ժխտումը քրեականացնող օրէնքի որդեգրումը, լուսանկարներու եւ միջազգային մամուլի էջերէ քաղուած վկայութիւններու իւրայատուկ ցուցահանդէսի իրագործումը, ինչպէս նաեւ 24 Ապրիլ 2015-ին, Երեւանի մէջ կայացած Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակի ոգեկոչման արարողութիւններուն Կիպրոսի Հանրապետութեան նախագահի մակարդակով մասնակցութիւնը եւ հայ ժողովուրդին զօրակցութիւն յայտնելը, սիրելի ընթերցողներ, չէին կրնար իրենց արժանավայել արձանագրութիւնը չգտնել «Լրատու»ի այս թիւին մէջ:

Գալով Կիպրոսին, ժողովուրդը կը շարունակէ ընկերա-
յին, ապրելակերպի ու ամենօրեայ դժուարութիւններ դի-
մագրաւել, հակառակ այն իրողութեան, որ վերջին ամիս-
ներուն անգործութեան տոկոսը սկսած է արձանագրել չըն-
չին բարելաւում, բաղդատմամբ յետ ճգնաժամային տար-
ւայ ամիսներուն: Երիտասարդներու մօտ եւ 25 տարեկանէ
վար անգործներու թիւը տակաւին կը շարունակէ բարձր
մնալ, որուն առաջքը առնելու համար, կառավարութիւնը
դիմած է կարգ մը գործնական քայլերու, մինչեւ տարե-
վերջ նուազեցնելու այդ համեմատութիւնը:

Ինչ կը վերաբերի Կիպրական հիմնահարցին առնչու-
թեամբ տարուող հապճեպ բանակցութիւններուն, նշարե-
լի է, որ իսկապէս լուրջ երկխօսութիւնը կը շարունակուի
թէ՛ բանագնացներու եւ թէ՛ երկու կողմերու առաջնորդնե-
րու հերթական հանդիպումներով: Հիմնուելով մամուլի մէջ
հրապարակուած տեղեկութիւններուն եւ երկու համայնք-
ներու առաջնորդներուն ունեցած հրապարակային ար-
տայայտութիւններուն վրայ, կարելի է ըսել, թէ յոյսերը մեծ
են, որ այս անգամ անոնք իսկապէս պիտի յանգին գործ-
նական, յարատեւող ու արդար լուծումի մը:

Իսկ ակնարկ մը նետելով Երեսփոխանական Գրասեն-
եակի գործունէութեան վրայ, կրնամ հաստատել, որ ծան-
րաբեռնուած ըլլալով հանդերձ գաղութէն ներս իրագոր-
ծուած ձեռնարկներու կազմակերպական աշխատանքնե-
րով ու յաջորդականութեամբ, գրասենեակը շարունակեց
իր կանոնաւոր ու հեզասահ ընթացքը: Այս եռամսեան կա-
րելի է բնութագրել որպէս ամենաբեղուն, աշխոյժ ու խիստ
արդիւնաւէտ շրջաններէն մէկը, Պետական Ներկայացու-
ցիչի մակարդակի միջոցառումներու մասնակցութեամբ ու
հանդիպումներով հարուստ, որոնց մասին անդրադար-
ձած ենք «Լրատու»ի յաջորդող էջերուն մէջ:

Նախքան խօսքիս ււարտը, կը փափաքիմ յիշել, թէ ինչ-

պէս ամէն տարի, այս տարի եւս Նարեկ Վարժարանի շրջանաւարտներէն քսան աշակերտներ, երկու ուսուցչուհիներու ընկերակցութեամբ, 19 Յուլիսին մեկնեցան Հայաստան: Յոյսով են, որ անոնք գեղատեսիլ Մայր Հայրենիքի մէջ պիտի ապրին յիշատակելի օրեր ու անմոռանալի պահեր:

Բարի վայելլուն ու ապահով վերադարձ մասնակիցներուն:

Խօսքիս աւարտին, բոլորիդ կը մաղթեմ հանդարտ ու կազդուրիչ ամառնային արձակուրդ:

Վարդգէս Մահտեսեան
Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ

ԵՌԱՄՍԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Հպատակութիւն

2015 տարուան երկրորդ եռամսեակին, 2 անհատներ եւ քառանդան ընտանիք մը, որոնք երկար տարիներ Լիմասոլ օրինաւոր բնակութիւն հաստատած էին, ստացան կիպրական հպատակութիւն:

Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակի Ոգեկոչման Ձեռնարկներ



Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակի Ոգեկոչման Կիպրոսի Յանձնախումբի նախաձեռնած միջոցառումներուն մեկնակէտը հանդիսացաւ, Հինգշաբթի, 2 Ապրիլ 2015-ին, Կիպրոսի եւ Հայաստանի Հանրապետութիւններու միացեալ ու միաժամանակ թողարկուած դրոշմաթուղթին առթիւ կազմակերպուած պաշտօնական ձեռնարկը, որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ Cleopatra պանդոկի սրա-

հին մէջ: Ներկայ էին Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի նախագահ Գալուստ Սահակեանը իր պատկերակութեամբ, Կիպրոսի Հանրապետութեան Ներկայացուցչական Տան նախագահ Եաննակիս Օմիրուն, Հաղորդակցութեան եւ Կապի նախարար Սարիոս Տիմիթրիատիսը, Կիպրոսի Փոստային Ծառայութեան տնօրէն Անդրէաս Ղրիղորիուն, բարձրաստիճան պաշտօնակատարներ, ինչպէս նաեւ կիպրահայ համայնքի ներկայացուցիչներն ու անդամները: Դրոշմաթուղթը հրապարակուեցաւ Մելգոնեան Որբանոցի շէնքին (յետագային Կրթական Հաստատութիւն) ու անոր դիմացը գտնուող ծառաստանին պատկերով, որոնք տնկուած էին ցեղասպանութենէն ճողոպրած որբերուն կողմէ՝ ի յիշատակ իրենց ծնողաց:

Յիշեցնենք, թէ Մելգոնեան Կրթական Հաստատութեան նկարը խորհրդանշական բնոյթ կը կրէ, իր մէջ ամփոփելով պատմական մեծ արժէք եւ խորհուրդ:



Ձեռնարկին պաշտօնական բաժինով, իրենց խօսքերը փոխանցեցին Գալուստ Սահակեան, Եաննակիս Օմիրուն, Սարիոս Տիմիթրիատիս, Վարդգէս Մահտեսեան եւ Անդրէաս Ղրիղորիուն, իսկ գեղարուեստական բաժինով ելոյթ ունեցան սփրանօ Ջարա Բարխուդարեան, դաշնակի ընկերակցութեամբ Լիլիա Խաչատրեանի:

Սոյն ձեռնարկէն անմիջապէս ետք, Կիպրոսի խորհրդարանին մէջ տեղի ունեցաւ լիազումար նիստ, որու ընթացքին Կիպրոսի խորհրդարանը միաձայնութեամբ որդեգրեց Ցեղասպանութիւններու ժխտումը քրեականացնող օրէնքը, ներառեալ Հայկական Ցեղասպանութիւնը: Այս պատ-

մական ու յանդուզն իրադարձութեան առիթով, Կիպրահայ Զանայնքի Պետական Ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեան, հրապարակաւ, իր եւ կիպրահայութեան երախտագիտութիւնը յայտնեց Կիպրոսի կառավարութեան եւ իր խորհրդարանական պաշտօնակիցներուն:

Տեղին է յիշել, թէ վերոնշեալ պատմական գոյգ իրողութիւններու լոյսին տակ, որոնց յաջողութեան եւ իրականացման աշխատանքներուն մէջ մեծ դերակատարութիւն ունեցաւ Պետական Ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեան, Լիբանանի «Ազդակ» օրաթերթը եւ «Ծաղիկ» գրական-ազգային հանդէսը, Պոլսոյ «Ակօս» շաբաթաթերթը եւ Զայաստանի Զանրապետութեան «Արմէնփրէս» լրատուական գործակալութիւնը, անմիջապէս կապ հաստատելով հարցազրոյցներ ունեցան անոր հետ:

Նոյն օրը կէսօրէ ետք, Կիպրոսի խորհրդարանէն ներս, ելոյթ ունեցան Զայաստանի Զանրապետութեան Ազգային



Ժողովի նախագահ Գալուստ Սահակեանը եւ Կիպրահայ Զամայնքի Պետական Ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանը: Նախքան ելոյթները, խորհրդարանի անդամները մէկ վայրկեան յոտնկայս լռութեամբ յարգեցին Զայոց Ցեղասպանութեան 1.5 միլիոն անմեղ նահատակներու յիշատակը:

Ուրբաթ, 3 Ապրիլ 2015-ին, Famagusta Gate-ի ցուցարահներուն մէջ, տեղի ունեցաւ «Զայկական Ցեղասպանութիւն. Վկայութիւններ լուսանկարներու եւ մամուլի էջերու ընդմէջէն» միւթով աննախընթաց ցուցահանդէսը, համագործակցութեամբ Զայաստանի Ցեղասպանութեան Թանգարան-Զիմնարկին, որուն պաշտօնական բացումը կատարեցին Կիպրոսի եւ Զայաստանի խորհրդարաններու նախագահները: Զոս տեղին է յիշել, թէ այս ցուցահանդէսի իրականացման աշխատանքին մեծապէս օժանդակեց ԶԶ Յունաստանի եւ Կիպրոսի արտակարգ եւ լիազօր դեսպան Պրն. Գագիկ Ղալաչեան: Բժախնդրութեամբ պատրաս-



տուած ու ներկայացուած ցուցահանդէսը, որու նախապատրաստական աշխատանքները ամբողջովին ստանձնած էր Կիպրոսի Խորհրդարանի Ցուցահանդէսներու Յանձնախումբը, մեծ արծագանգ գտաւ զանգուածային լրատուամիջոցներուն կողմէ: Նոյն երեկոյ, Յայաստանէն ժամանած պատուիրակութիւնը եւ Կիպրոսի Խորհրդարանի նախագահն ու այլ անձնաւորութիւններ, հիւրասիրուեցան Պետական Ներկայացուցիչին բնակարանը:

Շաբաթ, 18 Ապրիլ 2015-ին, Նիկոսիոյ «Բալլաս» սրահին մէջ, մեծ յաջողութեամբ տեղի ունեցաւ Յամազգայինի Կիպրոսի «Օշական» Մասնաճիւղի «Դիմակ» թատերախումբի «Ոտքի, դատարանն է գալիս» Սողոմոն Թեհլիրեանի դատավարութիւնը ներկայացնող թատերգութիւնը:


Ուրբաթ, 24 Ապրիլ 2015-ին, երեկոյեան ժամը 6:00-ին, Նիկոսիոյ կեդրոնէն ծայր առաւ Ապրիլեան յիշատակունի 100-ամեակին նուիրուած երիտասարդական մեծաթիւ քայլարշաւը, որուն այս տարի իրենց մասնակցութիւնը բերին աւելի քան 800 անհատներ, կրելով «Անմոռուկ Ծաղիկ»ի նշանակներ եւ պաստառներ: Քայլարշաւին, Լիմասոլի մայրուղիին եւ Արմենիաս պողոտայի խաչմերուկին վրայ անոնց միացան գաղութի երեց անդամները ու բոլորը միասին ուղղուեցան դէպի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Ապրիլեան յուշակոթող, ուր օդ արծակուեցան փունջ մը մանիշակագոյն եւ դեղին փուչիկներ, պատկերելով «Անմոռուկ»ը: Ապա տեղի ունեցաւ ծաղկեպսակներու ու ծաղիկներու զետեղում, որմէ ետք ելոյթ ունեցաւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ երգչախումբը: Աւարտին, ներկաները ուղղուեցան Ս. Աստուածածին եկեղեցի, ուր մատուցուեցաւ Ս. Պատարագ: Իսկ Շաբաթ, 25 Ապրիլին, Նարեկ դպրոցին մէջ տեղի ունեցաւ աւանդական արիւնի տուչութիւնը:

Կիրակի, 26 Ապրիլ 2015-ի առաւօտեան, Լառնաքայի Ֆինիկուտէս ծովեզերեայ շրջանէն սկիզբ առաւ հեծելար-



շաւ մը, ուղղուած դէպի Նիկոսիոյ Արմենիաս պողոտայի Ցեղասպանութեան յուշահամալիր, բաղկացած հայ եւ յոյն մասնակիցներէ: Հեծելարշաւը ձօնուած էր Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին, որուն մասնակցեցաւ նաեւ Նիկոսիոյ քաղաքապետ Կոնստանդինոս Եորկաճիս: Այս գեղեցիկ նախաձեռնութեան կազմակերպական աշխատանքը յանձն առած էին Երիի հեծելարշաւի ակումբի ներկայացուցիչ Բարսեղ Զարդարեան եւ Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակի Կիպրոսի Ոգեկոչման Յանձնախումբի անդամ Յակոբ Գազանճեան: Պետական Ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեան, ներկայ գտնուելով Ցեղասպանութեան յուշահամալիրի վայրը, ջերմօրէն դիմաւորեց ու շնորհաւորեց հեծելարշաւի մասնակցողները: Նշենք, թէ այս ձեռնարկը լայն արձագանգ գտաւ տեղական լրատուական միջոցներուն եւ հեռատեսիլի բոլոր կայաններուն կողմէ:

Իսկ Դինգզաբթի, 30 Ապրիլ 2015-ին, Ստրովոլուսի քաղաքապետարանի սրահին մեջ, հոծ բազմութեան եւ պաշտօնական հրաւիրեալներու ներկայութեամբ, տեղի ունեցաւ Զայոց Ցեղասպանութեան 100-ամեակին նուիրուած գլխաւոր հանդիսութիւնը, հովանաւորութեամբ Կիպրոսի Զանրապետութեան նախագահ Նիկոս Անաստասիատիսի, որուն ներկայացուց Արտաքին Գործոց նախարար եւ օրւան բանախօս Եաննակիս Կասուլիտիսը: Կիպրոսի կառա-



վարութիւններուն ցուցաբերած զօրակցութեան համար, ողջոյնի եւ երախտագիտական խօսքերով հանդէս եկան Կիպրահայ Զամայնքի Պետական Ներկայացուցիչն ու Զայաստանի Զանրապետութեան Յունաստանի եւ Կիպրոսի դեսպանը: Ապա, Պրն. Կասուլիտիս ելոյթ ունենալով, իր խօսքին մեջ լայն անդրադարձ կատարեց վերջին դարուն հայ ժողովուրդի մղած խիզախ պայքարին, որ առանձին պաշտպանելով իր Դատը զայն հասցուց այսօրուայ արդիւնքին: Գնահատելով կիպրահայ համայնքի ունեցած դերը կղզիէն ներս եւ Կիպրոսի կառավարութիւններու յարատեւ զօրակցութիւնը հայ համայնքին, ան չմոռցաւ անդրա-

դառնալու եւ Կիպրոսի զօրակցութիւնը յայտնելու նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան եւ Ժողովուրդին ազատ ինքնորոշման իրաւունքին մղած պայքարին, որու համար արժանացաւ ներկաներու բուռն ծափողջոյններուն: Գեղարուեստական բաժինով ելոյթ ունեցան դերասան-բեմադրիչ Ֆոտիս Ֆոտիատիս, սոփրանօ Սոնա Կարկալոյեան եւ Ալիս Այվազեան, Համազգայինի «Սիփան» պարախումբն ու Ս. Աստուածածին եկեղեցւոյ երգչախումբը: Ձեռնարկը վերջ գտաւ Կաթողիկոսական փոխանորդ Նարեկ Սրբազանի պահպանիչով:

Կիրակի, 17 Մայիս 2015-ին, Ստրովոլոսի քաղաքապետարանի սրահին մէջ բացառիկ ելոյթ մը տուին Համազգայինի «Սիփան» եւ «Նանօր» մանկապատանեկան պարախումբերը՝ ձօնուած Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակին:

Յաջորդ օրը, Երկուշաբթի, 18 Մայիս 2015-ին, կազմակերպութեամբ Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակի Կիպրոսի Ոգեկոչման Յանձնախումբին եւ Կիպրոսի Պետական Համալսարանին, հոժ բազմութեան մը ներկայութեան, տեղի ունեցաւ թուրք պատմագետ-ընկերաբանուսումնասիրող Փրոֆ. Թաներ Աքչամի դասախօսութիւնը՝



«Հայկական Ցեղասպանութիւնը նոր դիտանկիւնէ՝ 100 տարի ետք» նիւթով, Կիպրոսի Պետական Համալսարանի դասախօսութիւններու դահլիճէն ներս: Համալսարանի ռեկտոր Կոնստանդինոս Խրիստոֆիտիսի եւ Պետական Ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանի ողջոյնի խօսքերէն ետք, թրքագիտական բաժանմունքի տնօրէն Նիազի Քըզըլեուրէք ներկայացնելով դասախօսը զայն բեմ հրաւիրեց: Փրոֆ. Թանէր Աքչամի դասախօսութիւնը լոյս սփռեց ու հիմնաւորեց Հայոց Ցեղասպանութեան այն ոլորտները, որոնք մինչեւ օրս հարկ եղած ձեւով չեն արծարծուած, ինչպէս օրինակ հայ որբերու եւ կիներու թրքացումն ու բըռնի ամուսնութիւնը, սեռային չարաշահումները եւ Օսմանեան Կայսրութեան կողմէ ծրագրուած ու թուաբանական ճշգրտութեամբ գործադրուած՝ հայ բնակչութեան տեղահանութեան մանրամասնութիւնները: Վերջաւորութեան, ան շեշտը դրաւ եւ յանձնարարեց հայ ժողովուրդին թիկունք կանգնելու եւ օժանդակելու Թուրքիոյ մէջ զարգացող հասարակական-քաղաքական փոփոխութիւններուն, ապահովելու համար Հայկական Ցեղասպանութեան ճանաչումն ու փոխհատուցումը:

Վերջապէս, Ուրբաթ, 12 Յունիս 2015-ին, Նիկոսիոյ Համալսարանի ամփիթատրոնին մէջ, տեղի ունեցաւ Նունէ Եսայեանի «Կանք, պիտի լինենք ու դեռ շատանանք» բացառիկ համերգը, ձօնուած Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակին: Սօս մէկ ու կէս ժամ տեւողութեամբ, Նունէ Եսայեան հարազատօրէն մեկնաբանեց ազգային, հայրենասիրական եւ ժողովրդական երգեր, խանդավառութիւն ստեղծելով ներկաներուն մօտ:

Ամառնային արծակուրդներուն պատճառով, Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակի Կիպրոսի Ոգեկոչման Յանձնախումբի ծրագրած ձեռնարկները կարճ դադար մը պիտի առնեն ու պիտի շարունակուին վերամուտէն ետք:

**Կիպրոսի նախագահի, Խորհրդարանի նախագահի,
Կուսակցապետներու եւ այլ պաշտօնակատարներու
Չայաստան այցելութիւն 21-25 Ապրիլ 2015**



24 Մարտ 2015-ին, Կիպրոսի Չանրապետութեան նախագահ Նիկոս Անաստասիատիս ընդունելով Չայաստանի Չանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանի պաշտօնական հրաւերը, յայտարարեց, թէ 24 եւ 25 Ապրիլին պիտի այցելէ Չայաստան, Կիպրոսի կառավարութեան զօրակցութիւնը յայտնելու հայ ժողովուրդին, Երեւանի մէջ կայանալիք Չայկական Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի ոգեկոչման արարողութիւններուն: Տեղին է մէջբերել, Ծիծեռնակաբերդի մէջ Կիպրոսի նախագահին արտասանած խօսքէն հետեւեալը. «Թէ՛ Չայաստանը թէ՛ Կիպրոսը անպատժելիութեան զոհեր են, մեր պատմութիւնները փոխադկապուած են: Իւրաքանչիւրիս ներկայութեան նպատակը այսօր հոս, վառ պահելն է այս ողբերգութեան զոհերուն յիշատակը, ուղերձ յղել, որ անպատժելիութիւնը չի

կրնար անպատիժ մնալ: Չեմ կրնար չյիշատակել, որ 100 տարի առաջ, Կիլիկիոյ ջարդերէն ետք հայ տեղահանուածներու նաւերը՝ բեռնուած բազմաթիւ անձերով, ապահով ապաստան գտան Կիպրոսի մէջ»:

Նախագահի կողքին Հայաստան այցելեց նաեւ Կիպրոսի Խորհրդարանի նախագահ Եաննակիս Օմիրուն: Իսկ «Ընդդէմ Ցեղասպանութեան Յանցագործութեան» հասարակական-քաղաքական համաշխարհային վեհաժողովին ու Ս. Էջմիածինի մէջ տեղի ունեցած 1.5 միլիոն նահատակներու սրբադասման արարողութեան մասնակցեցան եւ Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակի ոգեկոչման պետական մակարդակի ծեռնարկներուն ներկայ գտնուեցան ՏԻՍԻ Կուսակցութեան նախագահ եւ Կիպրոսի Խորհրդարանի Կիպրոս–Հայաստան Բարեկամութեան Խումբի ատենապետ Աւերոֆ Նեոֆիտու, ԱԲԷԼ Կուսակցութեան Քաղաքական Բիւրոյի անդամ եւ նախկին կառավարական բանբեր Ստեֆանոս Ստեֆանու, ԷՏԷՔ Կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէի անդամ Պրն. Եորղոս Վառնավա,



ՏԻԿՕ Կուսակցության նախկին նախագահ Մարիոս Կարոյեան, Կիպրահայ Չամայնքի Պետական Ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեան եւ այլ կառավարական պաշտօնակատարներ:

«Նանօր» մանկապատանեկան պարախումբի տարեկան ելոյթ



Կիրակի, 17 Մայիս 2015-ին, Ստրովոլուսի քաղաքապետարանի սրահին մէջ, աննախընթաց յաջողութեամբ տեղի ունեցաւ Չամազգայինի «Սիփան» եւ «Նանօր» մանկապատանեկան պարախումբերու միացեալ տարեկան ելոյթը, որու ընթացքին 62 անդամ հաշուող «Նանօր» կրտսերներու խումբը, 5 պարերով տպաւորեց ու հմայեց հայ եւ օտար հասարակութիւնը: Բացառիկ կատարումներով, երկարաժամ փորձերէ ետք, պարուսոյց Պրն. Պետրոս Ղարիպեանի զխաւորութեամբ, զոյգ պարախումբերը ներկայացուցին անմոռանալի ելոյթ մը, որ ինչպէս գիտէք, այս տարի նուիրուած էր Չայկական Ցեղասպանութեան 100-ամ-

եակին: Ելոյթն ետք, պաշտօնական ու պետական բարձրաստիճան հրաւիրեալները, դեսպաններն ու հիւրերը, ջերմօրէն շնորհաւորեցին պետական ներկայացուցիչը եւ կիպրահայ համայնքը, զոյգ պարախումբերու յաջողութեան համար: Յոս տեղին է յիշել, թէ Ելոյթի տոմսերը դարձեալ լրիւ սպառած էին, շնորհիւ Յամազգայինի «Օշական» մասնաճիւղի եւ Երեսփոխանական Գրասենեակի յաջող համագործակցութեան:

Ուխտագնացութիւն դէպի Մակարավանք



Ինչպէս միշտ, այս տարի եւս կազմակերպութեամբ Երեսփոխանական Գրասենեակին եւ համագործակցութեամբ Ազգային Առաջնորդարանին, ութերորդ անգամ ըլլալով, Կիրակի 10 Մայիս 2015-ին դարձեալ իրականացաւ ուխտագնացութիւն դէպի Սուրբ Մակարայ Վանք, մասնակցութեամբ շուրջ 100 կիպրահայերու եւ այլ երկիրներէ ժամանած հայրենակիցներու:

Ուխտագնացութիւնը կը վայելէր Կիպրոսի Միացեալ Ազգերու Կազմակերպութեան (UNFICYP) հսկողութիւնը:

Փլատակ Ս. Մակարայ Վանքի անմխիթար խորանին դիմաց տեղի ունեցավ պատշաճ եկեղեցական արարողություն՝ Տէր Մոմիկ քահանայի մասնակցութեամբ, որու ընթացքին ուխտագնացները վերանորոգեցին իրենց ուխտը՝ կառչած մնալու հայապատկան մեր վանքին:

Այս տարուայ ուխտագնացութեան մասնակցեցաւ նաեւ Կերինիայի քաղաքապետ Պրն. Ղլաֆկոս Կարիօլուն, որ թէւ յուզուած ու զգացուած էր ամբողջ ուխտագնացութեան ընթացքին, սակայն իր գնահատանքը արտայայտեց ի տես կիպրահայութեան ցուցաբերած հաստատակամութեան ու պահանջատիրութեան ոգիին:

Վերադարձին, ուխտագնացները իրենց գոհունակութիւնը յայտնեցին Պետական Ներկայացուցիչին, բժախնդրորէն կազմակերպած ըլլալուն համար այս ուխտագնացութիւնը:

Կիպրահայ համայնքին նուիրուած երեկոյ Նախագահական պալատէն ներս



Չորեքշաբթի, 27 Մայիս 2015-ին, Կիպրոսի Հանրապետության նախագահ Պրն. Նիկոս Անաստասիատիսի նախաձեռնությամբ, նախագահական պալատին մէջ տեղի ունեցաւ կիպրահայ համայնքի մշակութային եւ քաղաքակրթութեան խթանման նուիրուած երեկոյ, ներկայութեամբ բարձրաստիճան պաշտօնական հիւրերու եւ կիպրահայ համայնքի ներկայացուցիչներուն ու անդամներուն:

Բացման խօսքով հանդէս եկաւ Մարդասիրական, Փոքրամասնութիւններու եւ Սփիւռքի հարցերու նախագահական յանձնակատար Պրն. Ֆոտիս Ֆոտիու, որ շեշտը դրաւ Կիպրոսի կառավարութեան ցուցաբերած յարատեւ զօրակցութեան հայ ժողովուրդի ու Հայաստանի նկատմամբ:

Ապա, Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Մահտեսեան, իր ու կիպրահայութեան անունով երախտագիտական խօսքեր ուղղեց Կիպրոսի կառավարութեան, որ մինչեւ օրս միշտ նեցուկ կանգնած ու օժանդակած է հայ համայնքի կարիքներուն:



Ապա, նախագահ Անաստասիատիս ելոյթ ունենալով, լայնօրէն լուսարձակի տակ առաւ Հայկական Ցեղասպանութենէն ճողոպրած եւ Կիպրոս բնակութիւն հաստատած հայ ժողովուրդի զաւակներուն ունեցած ներդրումը Կիպրոսի պատմամշակութային, ընկերային եւ զարգացման ոլորտներէն ներս: Ան իր խօսքին մէջ վերահաստատեց իր ու Կիպրոսի կառավարութեան զօրակցութիւնը՝ կիպրահայ համայնքին ու հայ ժողովուրդին հանդէպ, աւելցնելով, թէ

յոյսով է որ կիպրահայութիւնը պիտի շարունակէ իր երկար տարիներու ներդրումը ունենալ Կիպրոսի մէջ, հիմնահարցի լուծումէն ետք ալ:

Ապա գործադրուեցաւ պատշաճ գեղարուեստական յայտագիր, մասնակցութեամբ Համազգայինի «Սիփան» եւ «Նանօր» մանկապատանեկան պարախումբերուն, ինչպէս նաեւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ զոյգ երգչախումբերուն, որմէ ետք, նախագահական պալատի պարտէզին մէջ, տեղի ունեցաւ ընդունելութիւն:

Նարեկ Հայկական Վարժարաններու կեանքէն

Չորեքշաբթի, 3 Յունիս 2015-ին, տեղի ունեցաւ Նարեկ Վարժարաններու տարեկան մարզահանդէսը, նախագահութեամբ Պետական Ներկայացուցիչին: Ձեռնարկի աւարտին, Պրն. Մահտեսեան մետալներ յանձնեց առաջնակարգ դիրքերը զրաւող աշակերտներուն:

Չորեքշաբթի, 17 Յունիս 2015-ին, տեղի ունեցաւ Նարեկ Վարժարաններու Նախակրթարանի եւ Սիջնակարգի ամպլերջի հանդէսը, նախագահութեամբ Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեանի եւ հովանաւորութեամբ Կաթողիկոսական Փոխանորդ Տէր Նարեկ Արքեպիսկոպոսի: Հանդէսին, Պետական Ներկայացուցիչը կատարեց վկայականներու բաշխում եւ շրջանաւարտներուն ու ընկերակցող ուսուցչուհիներուն յանձնեց իր կողմէ տրամադրուած նուէրը՝ Հայաստան շրջապտոյտի տոմսերը:

Իսկ Ուրբաթ, 19 Յունիս 2015-ին, ըստ աւանդութեան, Նարեկի շրջանաւարտները, տնօրէնութիւնն ու ուսուցչական կազմը, ինչպէս նաեւ կղզիին բոլոր հայ շրջանաւարտները, ներկայութեամբ Տէր Մաշտոց եւ Տէր Սոմիկ քահանաներու, հիւրասիրուեցան Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններու բնակարանը:



Ձեռնարկներու ներկայութիւն

Շաբաթ, 18 Ապրիլ 2015-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը, ներկայ գտնուեցան Համազգայինի Կիպրոսի «Օշական» Մասնաճիւղի «Դիմակ» թատերախումբի «Ոտքի, դատարանն է գալիս» թատերական ներկայացումին, բեմադրութեամբ՝ Յարութ Թահմազեանի, որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ «Բալլաս» սրահին մէջ: Յիշենք, թէ այս միջոցառումը ընդգրկուած էր Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակի Կիպրոսի Ոգեկոչման Յանձնախումբի ծրագրած ձեռնարկներու շարքին:

Երկուշաբթի, 20 Ապրիլ 2015-ի երեկոյեան, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ, ներկայ գտնուեցան Նիկոսիոյ Անգլիական Վարժարանի կազմակերպած՝ Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակին նուիրուած «Հայկական Շաբթուան» բացման հանդիսութեան, որ տեղի ունեցաւ դպրոցի նախկին տնօրէնութեան բնակարանին մէջ:

Ձեռնարկին բացումը կատարեց եւ բացման խօսքով ելոյթ ունեցաւ Պետական Ներկայացուցիչ Պրն. Մահտեսեան, որմէ ետք տեղի ունեցաւ «1900-ական թուականներու Լուսանկարներու եւ Իրերու Ցուցահանդէս»: Յիշենք, թէ



կազմակերպական աշխատանքներու նախաձեռնութիւնը կը պատկանէր Անգլիական Վարժարանի կիպրահայ ուսուցչուհի Սիլվանա Ժամկոչեանին:

Կիրակի, 3 Մայիս 2015-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը ներկայ գտնուեցան Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ նատուցուած Սուրբ եւ Անմահ պատարագին, հանդիսապետութեամբ Նարեկ Սրբազանին, որմէ ետք տեղի ունեցաւ Ս. Մակարավանքի տօնին առիթով աւանդական հերիսայի օրհնութիւնը:

Երկուշաբթի, 4 Մայիս 2015-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մատեսեաններ ներկայ գտնուեցան Ալեքսանդր Քոլէճի կողմէ կազմակերպուած Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակին նուիրուած ձեռնարկին, որ տեղի ունեցաւ հաստատութեան թատերասրահին մէջ: Պետական Ներկայացուցիչը փոխանցելէ ետք օրուան խորհուրդը, բանախօսութեամբ մը ելոյթ ունեցաւ հետազօտող-ուսումնասիրող Ալեքսանդր Հաճիլիրաս, որմէ ետք տեղի ունեցաւ Հայկական Ցեղասպանութեան նուիրուած լուսանկարներու ցուցադրութիւնը:



Չորեքշաբթի, 6 Մայիս 2015-ին, Տեր եւ Տիկին Վարդգես Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Լառնաքայի Նարեկ Վարժարանի Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակին նուիրուած ոգեկոչման հանդիսութեան, հովանաւորութեամբ Կիպրոսի Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Տեր Նարեկ Արք. Ալէէմէգեանի եւ նախագահութեամբ Պետական Ներկայացուցիչին: Օրուան պատգամը փոխանցեց Նարեկ Վարժարաններու հոգաբարձութեան ատենապետ Պրն. Վարդան Թաշճեան: Ապա, ներկայացուեցաւ Մուշի Ս. Առաքելոց Վանքի Հերոսամարտը թատերախաղը, մասնակցութեամբ Նարեկի աշակերտութեան: Նշենք, թէ թատերախաղը բեմադրած էր Լառնաքայի Նարեկ Վարժարանի հայերէն լեզուի ուսուցչուհի Տիկին Մարալ Սոմաքեան, իսկ նիւթը համադրած էր Տիկին Մարի Սոմաքեան:

Չորեքշաբթի, 13 Մայիս 2015-ին, Կիպրոսի Հայ Օգնութեան «Սօսէ» մասնաճիւղի վարչութեան հրաւերով եւ միաւորի անդամական ժողովէն ետք, Պետական Ներկայացուցիչը դասախօսութիւն մը տուաւ խաչուհիներուն, փոխանցելով իր տպաւորութիւնները, ինչ կը վերաբերի 21-25 Ապրիլ 2015-ին Հայաստան կատարած իր ուղեւորութենէն, ուր ան մասնակցեցաւ «Ընդդէմ Ցեղասպանութեան Յան-

ցագործութեան» հասարակական-քաղաքական համաշխարհային վեհաժողովին եւ ներկայ գտնուեցաւ Չայկական Ցեղասպանութեան 100-ամեակի ոգեկոչման պետական-պաշտօնական մակարդակի ձեռնարկներուն:



Հինգշաբթի, 14 Մայիս 2015-ին, Պետական Ներկայացուցիչը հրաւիրուեցաւ ներկայ գրտնուելու եւ ելոյթ ունենալու Լիմասոլի ԷՏԷՔ Կուսակցութեան Նահանգային Յանձնախումբի կազմակերպած «Չայկական Ցեղասպանութենէն 100 տարի ետք» միջոցառումին, որ տեղի ունեցաւ Co-op Morphou Մշակութային Կեդրոնին մէջ: Բացման խօսքով ելոյթ ունեցաւ

ԷՏԷՔ Կուսակցութեան նախագահ Մարինոս Սիզոպուլոս, իսկ օրուան բանախօսն էր Կիպրոսի Ուսումնասիրութեան Կեդրոնի տնօրէն Պրն. Խրիստոս Եակովու: Ձեռնարկի ընթացքին տեղի ունեցաւ նաեւ Ցեղասպանութեան նուիրած ժապաւէնի ցուցադրութիւն:

Ուրբաթ, 29 Մայիս 2015-ին, Տէր եւ Տիկին Վարդգէ Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Կանդիուի Արուեստի Կեդրոնին մէջ տեղի ունեցած համերգին, որու ընթացքին ելոյթ ունեցաւ կիպրահայ թեմոր Ալեքս Մոսկոֆեան:

Շաբաթ, 30 Մայիս 2015-ին, Պետական Ներկայացուցիչը ծանօթացման հանդիպում մը ունեցաւ ՀՅԴ Բիւրոյի անդամ Խաչիկ Մուրատեանի հետ, որ յատկապէս Կիպրոս հրաւիրուած էր Մայիսեան Տօնակատարութեան առիթով օրուան խորհուրդը փոխանցելու:

Շաբաթ, 20 Յունիս 2015-ին, Տէր եւ Տիկին Վարդգէ Մահտեսեաններ, յատկապէս հրաւիրուելով, ներկայ գրտ-

նունեցան Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կիպրոսի Վարիչ Մարմինին կազմակերպած Հնչակեան Քսան Կախադաններու նահատակութեան 100-րդ տարելիցի յիշատակումի միջոցառումին, որ տեղի ունեցաւ Յ.Բ.Ը.Մ.-ի ակումբի «Գըրպըլըքեան» սրահին մէջ: Օրուան պատգամախօսն էր հայրենի գրող, հրապարակախօս Գրիգոր ճանիկեան:

Երկուշաբթի, 22 Յունիս 2015-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան յատուկ հրաւեր ստանալով, ներկայ գտնուեցաւ Terra Santa College-ի վկայականներու բաշխման ամսվերջի հանդէսին:

Կիրակի, 28 Յունիս 2015-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը ներկայ գտնուեցան Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ մատուցուած Ս. Պատարագին, որու ընթացքին Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի ընտրութեան եւ օծման 20-րդ տարեդարձին առիթով, հայրապետական մաղթանք կատարուեցաւ, հանդիսապետութեամբ Թեմիս Կաթողիկոսական Փոխանորդ Նարեկ Արքեպիսկոպոսին: Այս ուրախ առիթով, Պրն. Վարդգէս Մահտեսեան յատուկ գիրով մը իր բարեմաղթութիւնները յղեց Արամ Ա. Կաթողիկոսին:

Պաշտօնական մակարդակի հանդիպումներ եւ ձեռնարկներ

Երկուշաբթի, 30 Մարտ 2015-ին, Պետական Ներկայացուցիչը հրաւիրուեցաւ ներկայ գտնուելու Յունաստանի նորընտիր նախագահ Պրն. Պրոկոպիս Պալուպուլոսի ի պատիւ սարքուած ճաշկերոյթին, որ տեղի ունեցաւ նախագահական պալատին մէջ:

Երկուշաբթի, 6 Ապրիլ 2015-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան, տեսակցութիւն մը ունեցաւ Կրթութեան եւ Մշակոյթի Նախարարութեան ընդհանուր քարտուղար Տիկին Էլլի

Պանդեւակիին հետ, թելադրելու եւ առաջարկելու համար, որպէսզի կիպրական դպրոցներ յաճախող աշակերտութեան համար հերթական այցելութիւններ կազմակերպուին, Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակին առթիւ տեղի ունեցող՝ «Հայկական Ցեղասպանութիւն. Վկայութիւններ լուսանկարներու եւ մամուլի էջերու ընդմէջէն» ցուցահանդէսին:

Նոյն օրը, կէսօրին, Պետական Ներկայացուցիչը հանդիպում մը ունեցաւ Ներքին Գործոց Նախարարութեան ընդհանուր տնօրէն Պրն. Կոստաս Նիկոլաիտիսի հետ, քննելու Կիպրոս բնակութիւն հաստատած կարգ մը հայրենակիցներու հարցերը:

Երեքշաբթի, 7 Ապրիլ 2015-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան Խորհրդարանի իր գրասենեակին մէջ, տեսակցեցաւ Գերմանիոյ դեսպան Պրն. Նիկոլայ Վոն Շոհէփֆի հետ:

Երեքշաբթի, 12 Մայիս 2015-ին, Պետական Ներկայացուցիչը հրաւիրուեցաւ մասնակցելու Կիպրոսի Սկանտինաւեան Երկիրներու Առեւտրական Միութեան, Շուէտի ու Ֆինլանտայի դեսպանութիւններու, ինչպէս նաեւ Կիպրոսի Առեւտուրի ու Արդիւնաբերութեան Պալատի կողմէ կազմակերպուած «Սկանտինաւեան Նմոյշը-Առասպել թէ՞ Իրականութիւն» խորագիրով սեմինարին, որ տեղի ունեցաւ Շուէտի դեսպանին բնակարանին մէջ:

Չորեքշաբթի, 24 Յունիս 2015-ին, Պետական Ներկայացուցիչը հրաւիրուեցաւ ներկայ գտնուելու Ս. Նահանգներու դեսպան Պրն. Շոն Քէօնիկի կազմակերպած ընդունելութեան, որ տեղի ունեցաւ Chateau Status-ի մէջ, նշելու Ամերիկայի Միացեալ Նահանգներու ունեցած քառասուն տարիներու ներկայութիւնն ու աջակցութիւնը Կիպրոսէն ներս: Դեսպանը իր ելոյթի ընթացքին, յատուկ շնորհակալական խօսքեր ուղղեց Պրն. Մահտեսեանին, Վիքթորիա փողոցի Ս. Աստուածածին եկեղեցւոյ համալիր վերանորո-

գութեան ընթացքին անոր ունեցած ներդրումին ու համագործակցութեան համար:

Շնորհաւորագիր

7 Յունիս 2015 թուակիր գիրով մը, Պետական Ներկայացուցիչը իր ու կիպրահայութեան երախտագիտութիւնն ու շնորհակալութիւնը փոխանցեց Կիպրոսի Ներկայացուցիչներու Տան նախագահ Պրն. Եաննակիս Օմիրուին, 2 Ապրիլ 2015ին, Հայկական Ցեղասպանութեան Ժխտումը քրեականացնող օրէնքի որդեգրման եւ միաձայնութեամբ ընդունման առիթով իր տարած անկեղծ ու անսակարկ աշխատանքին համար:

Նոյն օրը, Պրն. Վարդգէս Մահտեսեան նամակով մը, իր ու կիպրահայութեան ջերմ շնորհակալութիւնները փոխանցեց Կիպրոսի Փոստային Ծառայութեան տնօրէն Պրն. Անդրէաս Դրիդորիուին ու անոր աշխատակազմին, Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակին առիթով, Կիպրոս-Հայաստան միացեալ դրոշմաթուղթի հրապարակման առնչութեամբ տարուած բացառիկ աշխատանքին, գործակցութեան ու իրականացման համար:

16 Ապրիլ 2015-ին, Պետական Ներկայացուցիչը իր ու կիպրահայ գաղութի անունով շնորհակալագիր մը յղեց Միացեալ Նահանգներու դեսպան Պրն. Շոն Քէօնիկին, Վիքթորիա փողոցի Ս. Աստուածածին եկեղեցւոյ ու համալիրին վերանորոգութեան ծրագիրին մէջ իր ունեցած ներդրումին ու ցուցաբերած աջակցութեան համար, որուն յաջող աւարտին առիթով, կառոյցը արժանացաւ Եւրոպական Միութեան Մշակութային Ժառանգութեան Europa Nostra 2015 մրցանակին:

Նոյն օրը, Պրն. Վարդգէս Մահտեսեան, մեծապէս գնահատելով Նարեկ Սրբազանին ունեցած նշանակալի դերն ու տարած աշխատանքը, 12 Ապրիլ 2015-ին, Վատիկանի

Ս. Պետրոս տաճարին մեջ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին առիթով մատուցուած Ս. Պատարագի ընթացքին, Ֆրանչիսկոս Պապին կատարած պատմական ելոյթին՝ Հայկական Ցեղասպանութեան հրապարակային ընդունման առնչութեամբ, շնորհաւորական նամակ մը յղեց անոր, փոխանցելով կիպրահայութեան ու իր անհուն զոհունակութիւնն ու հպարտութիւնը, մաղթելով Սրբազանին արեւշատութիւն շարունակելու իր սուրբ առաքելութիւնը:

Ցաւակցագիր

Կիրակի, 28 Յունիս 2015-ին, Պետական Ներկայացուցիչը իր ու կիպրահայութեան անունով ցաւակցագիր մը յղեց Տանն Կիլիկիոյ Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան եպիսկոպոսաց դասին, ամենապատիւ եւ գերերջանիկ Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքին անակընկալ վախճանման տխուր առիթով:

Զօրակոչիկներու հանդիպում

Ուրբաթ, 3 Յուլիս 2015-ի երեկոյեան, Պետական Ներկայացուցիչի Գրասենեակ ներկայացան 2014-2015 տարեշրջանի բանակի ծառայութեան կոչուած թեկնածուները, ընկերակցութեամբ կարգ մը ծնողներու: Պրն. Մահտեսեան խօսք առնելով, լայն կէտերու մեջ փոխանցեց բանակի ծառայութեան դրական կողմերը եւ յորդորեց անոնց իրենց ծառայութեան ընթացքին, համակերպիլ սպաներու եւ այլ բարձրաստիճան զինուորականներու հրահանգներուն: Ան նաեւ հաստատեց իր պատրաստակամութիւնը անոնց կողքին կանգնելու՝ տրամաբանական դժուարութիւններու պարագային: Ապա, բանակի նախկին ծառայող սպայ Կոնստանդինոս Փիթթաս մանրամասն տեղեկութիւններ տուաւ բանակի տարբեր բաժանմունքներուն, առօրեայ վարժութիւններուն եւ այլ հարցերու մասին:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Ամառուայ արձակուրդի շրջանին,
 Երեսփոխանական Գրասենեակը
 փակ պիտի մնայ
 Երկուշաբթի, 3 Օգոստոսին
 մինչեւ
 Կիրակի, 30 Օգոստոս 2015-ը:

ԿԻՊՐԱՅԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Քաղաքական Գրասենեակ

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos
 Հեռախոս 22- 45 45 40, Հեռառիպ 22- 42 46 42
 Ել. Հասցե office@armenianmp.com
 Ոստայնէջ՝ <http://www.armenianmp.com>

Խորհրդարանական Գրասենեակ

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia
 Հեռախոս 22- 40 72 02, Հեռառիպ 22- 40 74 42
 Ել. Հասցե vmahdessian@parliament.cy